ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարի տեղակալ

Հակոբ Վարդանյանին

Հարգելի՛ պարոն Վարդանյան,

Ձեր ուշադրությանն ենք ներկայացնում ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԿԱՌՈՒՑՈՂԱԿԱՆ ԵՐԿԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱՌԱՌՈՒԹՅՈՒՆ» ԾՐԱԳՐԻ շրջանակներում տրամադրված ենթադրամաշնորհների շրջանակներում ստեղծված, Հայաստանի ՔՀԿ-ների կոալիցիաների կառուցողական երկխոսության ցանցի անդամ «Հայաստանի կայուն և թափանցիկ էներգետիկ զարգացմանն ուղղված» ՔՀԿ կոալիցիայի՝ սույն թվականի հունիսի 12-ին ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարությունում կազմակերպված ՄԺԾԾ հայտերի քննարկման մասնակցության արդյունքում կազմած դիտարկումները։

ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության ՄԺԾԾ նյութերով առցանց նյութերի հղումը չէր աշխատում։ Ներկայացված ՄԺԾԾ հայտը լոկ արտահայտում էր նախարարության ապարատի պահպանման և միջազգային վարկային ծրագրերով նախատեսված ծախսերը։ Իսկ ծրագրային առումով ս/թ փետրվարին հաստատված Կառավարության զարգացման ծրագրից և համապատասխան գործողությունների պլանից բխող հիմնարար միջոցառումների համար գումարներ հատկացված չէր։ Օրինակ՝ շուրջ 1մլրդ դրամ նախատեսված էր արևային համակարգերի ֆինանսավորման համար, այն դեպքում, որ այս ոլորտում սահմանված թիրախային չափանիշներին հասնելու համար ՀՀ կառավարությունը բոլոր կարգավորումները տրամադրել է օրենսդրական-կարչգավորման դաշտի խթաններով, ստեղծել է շուկայական միջավայր, որում ներկայումս բարգավաճում է մասնավոր բիզնեսը։ Այս ուղղությամբ պետ.բյոջեից միջոցների հատկացումը առնվազն անհիմն է։ Իսկ ոլորտային ծրագրերի մշակման և մշտադիտարկման կարևորագույն խնդիրների համար միջոցներ նախատեսված չեն, մասնավորապես՝ էներգետիկ հաշվեկշռի մշակման, երկրորդ Էներգախնայողության գործողությունների ծրագրի մշտադիտարկման (2017-18թթ.) և երրորդ ԷԳԾ (2019-20թթ.) մշակման համար։

Ընդհանուր դիտարկումներ քննարկման հետ կապված՝

1. Նախարարությունում տեղի ունեցած քննարկումը չուներ կառուցողական բնույթ, քանի որ
    - քննարկման կողմերը չունեին ընդհանուր ֆոնային և մասնագիտական գիտելիքներ։
    - գերատեսչության կողմից հիմնականում ներկա էին աշխատակազմի ոչ տեխնիկական մասնագետներ, ֆինանսիստներ, հաշվապահներ, և այլն, որոնք պատրաստ չէին պատասխանելու մասնագիտական հարցերի, ոլորտային քաղաքականության կամ ծրագրային զարգացումներին։
    - Գերատեսչության կողմից բազմիցս հնչեցվեց կարծիք, որ ՄԺԾԾ հայտերը արդեն ներկայացված են և այլևս փոփոխության ենթակա չեն։
    - Չէր վարվում արձանագրություն, քննարկում կրում էր զուտ ձևական բնույթ։
2. Երկու-երեք օր շատ հատկացված հսկայածավալ և խիստ մասնագիտական տվյալների վերլուծության համար տրամադրված ժամանակը բավականին սահմանափակ էր։ Հաշվի առնելով հունիս ամսվա ընթացքում նմանատիպ ՄԺԾԾ հայտերի տարերային ծավալը ավելի քան տասնյակ ոլորտային կառույցներից, որոնք էներգետիկայի, բնապահպանության և համայնքային զարգացման ոլորտներին առնչվում էին, ՔՀԿ կոալիցիան ուներ մարդկային ռեսուրսի մեծ պակաս։
3. Կարիք կար՝ կոալիցիայից նախապես մեկ կամ երկու անդամ խորապես վերապատրաստվեր, նման տվյալներ վերլուծելու և ծանրակշիռ կարծիք կամ առաջարկություն ներկայացնելու համար։
4. Հաջորդ ՄԺԾԾ քննարկումների ժամանակ առավել շատ ժամանակ ունենալ՝ խորապես վերապատրաստվելու և «թվերով զինելու», ինչպես նաև գերատեսչության կողմից վաղօրոք ներկայացնել բյուջեների պատմողական հավելված/ուղեցույց։

Հ.Գ. Այդ ամբողջ ժամանակահատվածը խիստ անբարենպաստ էր նման գործընթացին ժամանակ և ռեսուրս տրամադրելու համար, քանի որ բոլորը քաջ տեղյակ են, որ կոալիցիաները/ծրագրերը գտնվում են ավարտական և հաշվետվողական փուլում, որը գերծանրաբեռնվածություն է առաջացնում։ Իսկ ռեսուրսների սակավություն ունեցող կազմակերպություններում այդ խնդիրը դարձավ մարտահրավեր։

Հարգանքներով՝

Հայաստանի կայուն և թափանցիկ էներգետիկ զարգացմանն ուղղված ՔՀԿ-ների կոալիցիա